



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



The image shows the front cover of an antique book. The spine, on the left, is bound in a dark red, textured material, possibly leather or cloth, with a repeating diamond-shaped pattern. The main cover area is decorated with marbled paper featuring a complex, organic pattern of irregular, cell-like shapes in shades of tan, cream, and light green. A small, rectangular, off-white paper label is affixed to the lower-left portion of the cover, bearing the number '1664' in a bold, black, sans-serif font.

**1664**



1160

---

151

XIV 7 41

1231

ԵՐԶԵՆԻԿ

545

ԱՐԱՏՈՒԹԻՒՆ



1669

ԿՈՍՏԵՆԴՆՈՒԳՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. Գ. ՉԼԻՉԻԼԻ

1856



1851

1851

1851

1851



## Ե Ր Զ Ա Ն Ի Կ

### Ե . Չ . Ե Տ Ո Ի Թ Ի Ի Ն

Իռլանտայի մէջ մեռնելու վրայ եղող աղջիկ մը ըսաւ . «Մայր՝ մահը ահարկու բան մըն է» :

Մայրը՝ աչքերը արցունքով լեցուած, իր զաւկին գունաթափ երեսը խանդակաթ սիրով ապշած նայելով՝ ըսաւ . «Լ.յո՛՛ անանկ է սիրելիս . ո՛ր էր որ ես քու տեղդ մեռնէի . սակայն դուն խոստովանանք եղար , ալ ինչո՛ւ կը վախնաս» :

«Լ.յո՛՛ . ան ամէն մեղքերս , որ կրնայի միտքս բերել՝ խոստովանանքին մէջ յիշեցի , և արձակում ալ առի . ու ճիշդ մահուան ժամը հասնելուն՝ վերջին օծումն ալ պիտի ընդու  
» 1

նիմ. բայց այսու ամենայնիւ՝ շուտով  
քաւարանին կրակին մէջ պիտի ըլ-  
լամ, ու դուն ալ շատ աղքատ ես մա-  
րիկ” :

Մօրը դիւրագգած սիրտը՝ աս խօս-  
քերուն նշանակութիւնն ու անոնց ցա-  
ւալի հետեանքը հասկընալով՝ թէ  
չպիտի կրնայ ստակ ճարելով սիրելի  
զակին հոգին ազատել ան սոսկալի  
կրակէն, ասանկ ըսաւ : «Ո՛հ, հիմա շատ  
աղէկ կը հասկընամ ըսածդ. և ճշմարիտ  
է Մա՛րիամս՝ մենք աղքատ ենք. բայց  
աս մատուրներովս պիտի աշխատիմ՝  
թէ որ մինչև չոր ոսկորներս ալ մնան,  
ու պատարագցուններու համար ստակ  
պիտի վաստըկիմ, որ օր մը առաջ  
քեզ երկինք հասցընեն : Իմ սիրելի՛  
Մարիամս, դուն որ օրհնեալ կոյսին  
անուանակիցն ես՝ կը կարծե՞ս թէ քու  
խեղճ մինաւորիկ մայրդ պիտի հան-

գրատանայ, մինչև որ քու հոգիդ երկնային փառքին մէջ ապահով ըլլայ: Ո՛չ, ամէն ցորեկը պիտի աշխատիմ, ամէն գիշերն ալ Երկինքի Թագուհին՝ ու բոլոր սուրբերուն պիտի աղօթք ընեմ քու հոգիիդ հանգստութեանը համար. և սի՛րեւիս՝ հանգի՛ստ եղիր, ու պատարագցուններու համար ալ հոգ մի՛ ըներ”:

“Սիրելի՛ մայրս, պատարագցուններու համար այնչափ սաստիկ աշխատիլդ գիտնալս՝ բնաւ իմ հոգիիս հանգստութիւն չպիտի տայ. ընդ հակառակն՝ բուն ադ բանն է որ մեռնիլըս աւելի դառն կ’ընէ”:

“Շիտակ է ըսածդ՝ սի՛րեւիս. սակայն կարելի է որ հոն ադ բանը չպիտի իմանաս. հիմա ամէն բան քահանայի՛ն յանձնէ, և իր ապրսպրածին պէս սուրբ Կոյսին աղօ՛թք ըրէ, և ինքը քու սըր-

տիղ խաղաղութիւն պիտի տայ” :

“Ո՛չ, աս բոլոր բաները իմ առջև  
մութ են . ես կ’ուզեմ գիտնալ թէ ո՞ւր  
կ’երթամ : Քահանային ըսածէն աւել  
լ՛ի և շա՛տ աւելի գիտնալ կ’ուզեմ” :  
Ասոր վրայ շուտ մը սա խօսքն  
ալ յարեւով՝ ըսաւ . “Մայր՝ շատ  
անգամ կը խորհիմ մեր ազգականին՝  
Քաթիլինին մահուանը վրայ . անի-  
կայ ո՛չ արձակում՝ ո՛չ վերջին օծում՝  
և ո՛չ ալ պատարագներ վայելեց .  
բայց և այնպէս շատ երջանիկ մե-  
ռաւ” :

“Ա՛ղջիկս՝ անիկայ հերետիկոս մըն  
էր , և բնաւ բան մը չէր գիտեր , և ա-  
նանկով իր մեղքերուն մէջ մեռաւ :  
Քու վիճակդ անկէ լաւագոյն է . ճշմա-  
րիտ Եկեղեցւոյն սուրբ հաւատքովս  
ու իր բոլոր օրհնեալ ծէսերովը պիտի  
մեռնիս՝ թէ և հիմա ան խեղճ Քաթիլ-

նին չափ երջանկութիւն մը զգալու  
ալ չըլլաս” :

Աղջիկը ըսաւ . «Անոր խօսած քանի  
մը խօսքերը հիմա միտքս կու գան . ինքը  
ասանկ կ’ըսէր : «Թեպէտ և մահուան  
շուքին ձորին մէջը քալեմ, չարէն չպի-  
տի վախնամ . ինչու որ դուն իմ հետս  
ես . քու ցուպդ և գաւազանդ զիս կը  
մխիթարեն» : Ի՞նչ ըսել կ’ուզէր անի-  
կայ . ես մխիթարութիւն չունիմ, գա-  
ւազան չունիմ . ես խաւարին մէջ կը  
տազնապիմ, և միայն անդին մեծ  
կրակներ կը տեսնամ, ու վախով լեց-  
ուած եմ . Քաթիւնը քաւարանին չէր  
հաւատար” :

«Աղ ի՞նչ կ’ըսես, ձանդ կտրէ՞  
անղջիկս . հիւանդութիւնն ու ցաւը քու  
միտքդ շիտակ ձամբայէն դարձուցած  
են . քնացի՛ր ու մոռցի՛ր անիկայ, և  
օրհնեալ կոյսին ապաւինէ” :



«Աղէկ՝ աղէկ կ'ըսես մա'րիկ, անանկ  
ընելու ջանք պիտի ընեմ. բայց աս  
բանը չմտածելը ձեռքս չէ՝ թէ մէկանց  
չիփ շիտակ երկինք երթալը աւելի եր-  
ջանկութիւն տուող բան մըն է. երա՛նի  
թէ կարող ըլլայի ան տեղին վրայ  
Քաթիւնին բոլոր խօսածները միտքս  
բերել» :

«Մա'րիամ՝ մէկանց շիփ շիտակ եր-  
կինք երթալը, մեզի պէս մեղաւորնե-  
րուն բանը չէ. մենք Ակեղեցիին ցու-  
ցուցած ճամբովը երթալու ենք» :

«Բայց սիրելի՛ մայրս՝ իրաւ որ անիկայ  
մէկ դժուար ճամբայ մըն է. շատ ան-  
գամ կը վախնամ թէ քաւարանին կը-  
րակներուն մէջ մտնողներէն ոմանք՝  
բնաւ կարող չպիտի ըլլան անկէ ել-  
լալու» :

«Հիմա՛ սի'րելիս, անվտաս՛ մի՛ ըլ-  
լար պատարագներու վրայ. բայց թէ

որ քահանան բոլոր քու ըսածներդ իմանայ, շատ դժուար պիտի ըլլայ ինձի՝ որ քիչ ստակով բանը լմնցընեմ: Հիմա ադ բանին վրայ բնաւ մի՛ խորհիր. եղբայրդ ալ հոս է, ու քովիկդ պիտի նստի՝ մինչև որ ես իմ գործս լմնցընեմ ու ետ դառնամ”:

Նոյն միջոցին եղբայրը հիւանդին սենեակէն ներս մտած ըլլալով՝ քրոջն ու մօրը իրարու հետ ըրած խօսակցութեան մէկ մասը գաղտուկ լսեր էր, ու հիմա իր քրոջը քովիկը նստաւ տըխուր սիրտով մը. որովհետև բժիշկը ըսեր էր որ՝ ալ անոր ըւրնտնանալուն յոյս չկայ, և ինքն ալ հեռու տեղէ մը եկած էր որ անոր մեռնելէն առաջ հեղ մըն ալ տեսնէ:

“Մարիամ”, ըսաւ եղբայրը, երբ որ մայրերնին դուրս ելլելով՝ իրենք մինաւորիկ մնացին. “Ի՞նչ է

ան ըսածներդ՝ Քաթլինին վրայով”:

«Ա՛հ՝ եղբայրս, երնէկ էր ինձի՛ թէ որ ես ալ անոր պէս երջանիկ մեռնելու կարող ըլլայի. թէպէտ ճշմարիտ է որ անիկայ ո՛չ արձակում առաւ ու ո՛չ ալ վերջին օժում, ու քաւարանին ալ չէր հաւտար, բայց վստահ էր որ շի՛ շիտակ երկինք պիտի երթայ”:

«Ի՛այց մոլորութեան ու մեղքի մէջ մեռնիլ չէս ուզեր դուն, անանկ չէ՞, Մա՛րիամ”:

«Ա՛յո՛՛ չեմ ուզեր, բայց ճանդ կտրէ. քեզի ըսեմ ախբարիկս՝ թէ որ աս աշխարհիս վրայ հրեշտակ մը կար, անիկայ Քաթլինն էր. ու ես չեմ կրնար հաւտալ որ անոր հոգին դժոխքը գնաց, միայն անոր համար —”

«Ա՛նոր համար որ՝ Տէր Յիսուս Քրիստոսին արիւնին ու անոր արդարութեանը կը հաւատար”, ըսաւ եղբայրը.



“Չէ՛ , քուրիկս • որովհետև բուն աղէ պատճառը՝ անոր ամենեւին հոն երթալու կարօտ չըլլալուն • և ան որ կ'ըսես թէ արձակուամ չառաւ ու վերջին օժուամ չեղաւ , ատանկ չէ՛ • երկուքն ալ առաւ” :

“Աղ ի՛նչ խօսք է որ կ'ընես • անիկայ հերետիկոս կ'ըսուէր , ու Եկեղեցիին ձեռքէն օրհնութիւն չառաւ” :

“Շ իտակ կ'ըսես , բայց անիկայ աւելի կարճ ճամբով մը աղ բանը լինցուց • շիփ շիտակ բուն ան Տէրոջը ձեռքէն առաւ : Տէրը իր սրտին մէջ խօսեցաւ ու մխիթարեց զինքը , իրեն թողութիւն տալուն ու զինքը սիրելուն վրայ վստահ ընելով : Հիմա բանը ասանկ ըլլալով՝ դուն ի՛նչ կը կարծես , ալ Քաթիւնը ուրիշ մէկէ մը բան մը առնելու կը կարօտէ՞ր : Եւ ինքը ճշմարիտ օժութիւնը ունէր Սուր-

բէն՝ , և փրկութեան համար զինքը իմաստուն ընելու ամէն բաները գիտէր . ուստի ալ դուրսէն քսուած եղին ինչ կարօտութիւն կը մնար” :

Մարիամը աս բաները լսելով՝ եղբօրը վրայ երկու իրարու հակառակ զգացում ունենալ սկսեց . այսինքն՝ երկիւղ և ուրախութիւն . ու վերջապէս ասանկ կանչեց . «Վրա՛ն որ՝ ախբարս , դուն ալ հերետիկոս մը եղեր ես” :

«Վղէկ՝ թո՛ղ ատանկ ըլլայ , բնաւ հոգ չէ . ատանկ նախատական տիտղոսներուն վրայով ամենեւին հոգ չեմ ըներ . բայց ես Սուրբ Գիւրքը կարգալու ետեէ եղած եմ՝ քուրիկս — Աստուծոյ բուն իր օրհնեալ Գիւրքը , որ խեղճ մեղաւորներուն համար այնքան լեցուն է սիրոյ խօսքերով՝ որ դուն ալ անոնք լսելու որ ըլլաս , քու սիրտդ ալ պիտի հալի” :

«Քայց ինտո՞ր ձեռք անցուցիր ադ գիրքը : Քահանան գիտե՞» :

«Շիտակը , չկայնեցայ անոր հարցուցեր , էի . ես անիկայ Վարդացող՝ ըստւածէ մը առի . ու ինք ինձի ըսաւ որ՝ Անգղիայի մէջ ո՛վ որ ուզէ կրնայ կարգալ , Սուրբ Գիրքը մէկու մը արգելուած չէ բնաւ . և քահանաները՝ չէ՛ , ի՛նչ կ'ըսեմ , քահանայ չէ՛ — ան տեղին եկեղեցիներուն մէջի Քարողեջները՝ շատ կ'ուրախանային որ բոլոր ժողովուրդը կարգայ ան գիրքէն , որ մեղաւորներուն համար տրուած է : Աս ալ ինք իրենս ըսի . ես որ Թագուհիին հաւատարիմ հպատակն եմ , ինչո՞ւ չպիտի կրնամ ուրիշ հպատակներուն վայլած արտօնութիւնը ես ալ վայելել , ու նա Աստուածաշունչ Գիրքէն մէկ հատ մը առնել կարգալ : Աս բանը պիտի ընեմ՝ ըսի , և անանկ ըրի . որովհետև գիտեա

որ ես ալ ատեն մը կարդալու սէր ունէի : Ու կարդալով կարդալով անանկ աղուոր բաներ գտայ մէջը , ու անանկ շուտով մը անոնք իմ սրտիս զարկին՝ որ ալ չկրցայ ետ կենալ , թէ և էր իմ ալ անոր համար : Բայց անոնց վրայով մինչև հիմա մօրս բան մը չըսի” :

«Խեղճ մայր , անոր սիրտը շատ կոտորի պիտի” , ըսաւ Մարիամը՝ սիրտ անցընելով մը : «Բայց հիմա անխաբիկս , սիրտս հատաւ քու խօսքերուդ լմննալուն սպասելով . որովհետև մեծ փափաքս ան է որ՝ իմացընես ինձի թէ Աստուածաշունչին մէջ քաւարանին վրայով ի՞նչ կարդացիր . կ’աղագէմ ըսէ՛ ինձի , ես ան կ’ուզեմ գիտնալ” :

«Ի՞նչ պիտի ըլլայ . նա դատարկ պընակին (Բասպախ) մէջ ինչպէս որ բան մը չէս կրնար տեսնալ , հոն ալ անանկ բան

չես կընար գտնալ . անիկայ բոլորովին տեղ չունի հոն . ծարէ ծար փնտուեցի , բան մըն ալ չկայ . սիրտդ թո՛ղ ճատնի , հանգիստ եղեր քուրիկս . որովհետև բոլոր տիեզերքին մէջը անանկ տեղ մը չկայ՝ որ հոն երթաս : Ես ալ քեզն ապահովութիւն կու տամ Աստուածաշունչին վկայութիւնովը՝ որ դուն շատակ երկինք կ'երթաս , միայն թէ որ մէկ բան մը կայ՝ անիկայ ընես" :

«Ի՛նչ է ան , ի՛նչ է . ի՛նչ բան կայ որ կարող ըլլամ ընելու , և չուզեմ ընել շիտակ հոն երթալու համար : Ներողութի՛նն առնեմ ըսել կ'ուզես" :

«Չէ՛ , չէ՛ , բնաւ ատանկ բան մը չես ըսելիքս . թէ որ մտիկ ընես , պիտի կարդամ ան աղուորիկ խօսքերը" . — ու իր գրպանէն (ճէպ) հանելով պզտիկ Աստուածաշունչը՝ որ զինքը արթըն-



ցուցեր էր, սկսեց աս խաւանտացի պատանին անոր մէջէն կարդալ . «Աստուած անանկ սիրեց աշխարհը, մինչև որ իր միածին Սրդին տուաւ . որ ամէն ո՛վ որ անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ՝ : (Յովհ . գ . 16 : ) «Անիկայ մեր մեղքերուն համար վերաւորուեցաւ, և մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ . մեր խաղաղութեան պատիժը անոր վրայ եղաւ . և անոր վերքերովը մենք բժշկուեցանք՝ : (Լուս . ծգ . 5 : ) «Քո՛ւրիկս, անանկ կը կարծես որ Տէրը կէս չարչարանք քաշեց, ու մեղաւորներն ալ միայն կէս մը բժշկելու կարողութիւն ունի : «Թո՛ղ ամբարիշտը իր ճամբայէն՝ ու անօրէն մարդը իր խորհուրդներէն հրաժարի, և Տէրոջը դառնայ, ու անիկայ պիտի ողորմի անոր . ու մեր Աստուծոյն, ինչու որ ա-

Նիկայ առատապէս կը ներէ՛: (Լուսյ .  
 ծե . 7 : ) Անիկայ առատապէս ներող  
 եղած կ'ըլլայ , սիրելի՛ քոյրս , թէ որ  
 մենք ան ըսուած բանտը երթանք չար-  
 չարանք քաշենք՝ մինչև անգամ Աս-  
 տուծոյ խոստացած առատ ներումը  
 ի՛նչ ըլլալուն համը չառած” :

«Ա՛հ , սիրելիս , իրաւ կ'ըսեմ որ՝  
 բոլոր առ խօսքերը իմ ականջիս նոր  
 ձայներ են . բայց շիտակը՝ շատ աղուոր  
 խօսքեր ալ են” :

«Ես կը խորհիմ որ՝ Մա՛րիամ ,  
 Քահանան պիտի ըսէր թէ քաւարանը  
 բաւական աղէկ տեղ մըն է խաչին վը-  
 րայի աւազակին համար . բայց Յիսուս  
 ըսաւ . «Դուն այսօր իմ հետս դրախ-  
 տին մէջը պիտի ըլլաս՝ . այսինքն՝ մար-  
 մինէն հեռանար , ու Տէրոջը քովը կե-  
 նար պիտի : Ինչպէս որ ինքը բոլորովին  
 ներեց անոր , նմանապէս հիմա ալ կը

091/

ներէ . վասն զի «Յիսուս Քրիստոսը նոյն է երէկ ու այսօր, և յաւիտեանս» : Աստուածաշունչը կ'ըսէ . «Իսկ արդ՝ դատապարտութիւն չկայ Յիսուս Քրիստոսով եղողներուն» . «Ո՞վ է որ Աստուծոյ ընտրածներուն դէմ մեղադիր ըլլայ» . «Քրիստոսն է որ մեռաւ» . ո՛չ թէ անոնք չարչարուեցան, այլ Քրիստոս մեռաւ . և հաստատ գիտցի՛ր որ անոր վրան դրուած մեղքը՝ իրեն հաւտացողներուն մէկուն մարմնոյն կամ հոգւոյն տազնապ մը տալիք չունի . և երկրաւոր քահանայի մը ի՞նչ կարօտութիւն կը մնայ, երբոր «Քրիստոս մէկ պատարագով մը մշտնջենաւորապէս կատարեց սրբուածները» : (Եբ. Ժ. 14 :

«Ն՛ղբայրս՝ «Սրբուածները՝ ի՞նչ ըսել է . միթէ սրբուելու համար չէ՞ որ մենք քաւարան կ'երթանք» :



«Ո՛չ. «Բանգի աս է ան ուխտը՝ որ  
 Իսրայէլի տանը հետ պիտի ընեմ ան  
 օրերէն ետքը՝ կ'ըսէ Տէրը . իմ օրէնք-  
 ներս անոնց մտքին մէջը պիտի դնեմ,  
 և անոնց սրտին վրայ պիտի գրեմ  
 զանոնք . . . և անոնց մեղքերը ու անօ-  
 րէնութիւնները ալ պիտի ջլիշեմ՝ :  
 Գսկ ո՛ւր որ ասոնց թողութիւն կայ, ալ  
 մեղքի համար պատարագ պէտք չէ՝ :  
 (Նէր . ր . 10, 12 : Ժ . 18 :) Աիրելի՛ քոյրս՝  
 քու չարչարանք քաշելուդ զոհերը պէտք  
 չեն . ու ոչ ալ մօրդ պատարագցու  
 ստակներ տալը : Երբոր մեր օրհնեալ  
 Տէրը պիտի մատնուէր , բոլոր իր  
 ժողովուրդին համար աղօթք ըրաւ  
 բռնուելէն առաջ . և իր աղօթքին  
 մէջ քաւարանը երթանուն վրայ բնաւ  
 բան մը չխօսեցաւ . ոչ ալ ուրիշ ճամ-  
 բով մը սրբացում ստանանուն վրայ ,  
 բաց 'ի ան մէկ հատիկ ճամբայէն՝ :

«Եւ որն էր ան ճամբան» :

«Ինքը ըսաւ . «Սրբէ՛ անոնք քու ճշմարտութիւնովդ . քու խօսքդ ճշմարտութիւն է» : (Յ՝ԼՏ . Ժէ . 17 :) Պօղոս Եւաքեալը ըսաւ . «Քրիստոս ալ սիրեց Եկեղեցին , ու իր անձը մատնեց անոր համար . որ զանիկայ սրբէ ու մաքրէ — խօսքով՝ : (Եփե՞ . Ե . 26 :) Եւ դարձեալ . «Եւ որչափ աւելի Քրիստոսի արիւնը՝ որ յաւիտենական Հոգիին ձեռքովը իր անձը անարատ պատարագ մատուց Եստուծոյ , պիտի սրբէ ձեր խղճմտանքը մեռած գործքերէն՝ կենդանի Եստուածը պաշտելու» : (Եփ . Թ . 14 :) Եւ Թեսաղոնիկէին մէջ գտնուած Տէրոջը ժողովուրդին ըսաւ . «Քայց մեզի պէտք է միշտ Եստուծմէ գոհանալ ձեզի համար՝ Տէրոջմէ սիրուած եղբայրներ . ինչու որ Եստուած առաջուց ձեզ ընտրեց փրկուե-

լու շողիին սրբելովը՝ ու ճշմարտու  
թեան հաւատքովը՝ (բԹԷ\* . բ . 12 :)  
Եւ ասանկով՝ Մարիամ, Քրիստոսի  
արիւնը մեզի համար է, ու անոր Խօս-  
քը մեր ձեռքն է . ու աս լեցուն և  
կատարեալ փրկութիւն մըն է” :

“Ո՛հ՝ եղբայր, ճշմարիտ որ քու իմ  
մահուան անկողինիս քով գալով՝ աս  
գեղեցիկ բաները ինձի խօսիլդ, Լս-  
տուծմէ խրկուած օրհնութիւն մըն է  
ինձի . և բոլորն ալ անանկ դիւրին և  
շիտակ են, ու ճիշդ Քաթիւնին ըսած  
խօսքերուն նման են . սակայն ե՛ղբայր՝  
հիմա ի՞նչ պէտք է որ ընեմ . գիտե՞ս  
դուն ինձի ըսիր որ, թէ որ մէկ բան  
մը կայ՝ անիկայ ընես՝ —”

“Լ՛հա՛ ճիշդ սա է, ինտոր որ Լս-  
տուծոյ պատուական Խօսքը կ’ըսէ . Վե-  
մեժ քահանայ մը ունենալով Լս-  
տուծոյ տանը վրայ, (այսինքն՝ Տէր Յի-

սուսը, որ իր մէկ հատիկ պատարագո՞  
 վը՛ մէկ անգամ մատուց ինքզինքը՝)  
 մօտենանք ճշմարիտ սրտով՝ լեցուն  
 հաւատքով՝: (Եբ․ Ժ․ 21, 22 :)  
 Պէտք է որ աս պատուական բաներուն  
 հաւատք ունենաս, և անոնք բուն  
 քու անձիդ սեպհական ընես . «Հա-  
 ւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսին, ու  
 պիտի փրկուիս . (Գործ․ ԺԳ․ 21․)  
 հի՛մա՛ անմիջապէս հաւատա . և մենք  
 հաւատքով արդարացած ըլլալով՝  
 խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ՝  
 մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռ-  
 քովը՝ . ու ան ատենը՝ Աստուծոյ փա-  
 ռաց յուսովը կը պարծինք . քանզի  
 «հի՛մա որ իր արիւնովը արդարացանք,  
 ո՛րչափ աւելի իրմով պիտի ազատինք  
 բարկութենէն»: (Հռովմ․ Ե․ 1, 2․ 9 :)  
 Ռ՛վ Մարիամ՝ ուր որ դառնաս՝ բոլոր  
 խօսքը միօրինակ պիտի գտնաս . ու բո-

լորն ալ Աստուծոյ խօսքերն են , և արժան են որ միշտ սիրենք՝ ու վըստահինք անոնց : Հիմա սրտիդ մէջը կ'զգաս , որ Աստուծոյ ըսածին կը հաւատաս” :

«Միայն կը վախնամ որ ըսածներդ չափազանցութիւն չըլլան” , ըսաւ Մարիամ վախկոտութեամբ մը . « քանզի եղբայր՝ թէ որ անոնք ճշմարիտ են , ինչո՞ւ նոյն բաները քահանան մեզի չըսէր : »

«Ճշմարիտ են . որովհետեւ ըսածներս Սուրբ Գիրքին մէջէն են , և Աստուած խօսեցաւ անոնք , և շատ դիւրին բան է հասկընալ թէ ի՞նչ է պատճառը՝ որ քահանաները չեն խօսիր անոնց վրայ . վասն զի այսպիսի խօսքերը՝ իր պապական կարկրտանները — արձակուամբ՝ պատարագն ու քաւարանը կործանելու , և տակնուվրայ ընելու կը ծա-



ուայեն : Սակայն Մա՛րիամ՝ հիմա մէկ  
 դի՛ ձգէ քահանային ինչ միտքով Աս-  
 տուծոյ խօսքը ժողովուրդէն պահելը .  
 դուն նայէ որ հիմա Տէրոջը դառնաս .  
 «Մօտեցի՛ր ճշմարիտ սրտով՝ լեցուն  
 հաւատքով՝ . Մա՛րիամ՝ պէտք է որ  
 հաւատք ունենաս , ու չէ թէ պատա-  
 րագներ . պատարագը եղաւ , արիւնը  
 թափուեցաւ , որ քեզ բոլոր քու մեղ-  
 քերէդ մաքրէ . անանկ որ՝ ուրիշ ընե-  
 լու բնն մը չկայ , բայց միայն Քրիս-  
 տոսի հաւատալ” :

«Հաւատք , հաւատք—ի՞նչ է ան .  
 ի՞նչպէս կրնամ ձեռք ձգել” :

«Ո՛հ՝ որչափ սիրելի է Սուրբ Գիր-  
 քը , քանզի սա՛յալ կ’իմացընէ մեզի  
 թէ՛ Աստուծոյ պարգևն է՝ : Հաւատ-  
 քը՝ յուսացուած բաներուն հաստա-  
 տութիւնը ու չերեցած բաներուն  
 ապացոյցն է՝ : (Նքր . ժա . 1 :) Խոս-

տացեալ բանը տակաւին ձեռք չձգած՝  
հաւատալ մըն է թէ Տէրը ի՛նչ որ  
կ'ըսէ՝ ճշմարիտ է, ու պիտի կատարէ  
իր խոստմունքը: Ղշմարիտ՝ սիրելի  
Մարիամն, կասկած չընես որ ես քեզի  
սուտ կը զըուցեմ”:

“Ո՛չ, կասկած չեմ ըներ ե՛ղբայրս,  
դուն իմ հետս միշտ մարդասիրու  
թեամբ վարուեցար, ու ճշմարտու  
թեան հոգին միշտ քու մէջդ է”:

“Ուրեմն՝ աւելի բարձր և լաւագոյն  
կերպով Քրիստոսի վրայ խորհէ, որ  
ինքը քեզի համար մեռաւ. անմիջա-  
պէս հաւատա՛ անոր ըսածին: Բայց  
կեցիր—դեռ մէկ պատուական օգնող  
մըն ալ կայ. որովհետեւ Առաքեալը  
կ'ըսէ, Մէկն ալ չկրնար Յիսուսը՝  
Տէր կանչել, եթէ ո՛չ Հոգւով  
Սրբով՝. ( ա կորնթ. ժբ. 3. ) ու  
ինքը կարող է աս բոլոր բաները

քեզի հաւտացընելու . Խնդրէ իր-  
 մէն , որ քեզի սորվեցընէ : Բնորե-  
 ցէք՝ և պիտի տրուի ձեզի՝ . Ինչու որ  
 Տէրը ըսաւ , Եթէ դուք՝ որ չար էք՝  
 ձեր զաւակներուն աղէկ ընծաներ տալ  
 գիտէք , ո՛րչափ աւելի ձեր Հայրը՝  
 երկինքէն Սուրբ Հոգին պիտի տայ ա-  
 նոնց , որ իրմէ կը խնդրեն՝ : ( Ղ. 11-ի .  
 Ժա . 13 : ) Եւ Հ՛ թէ որ Եստուած իր  
 Սուրբ Հոգին քեզի տայ — ու պիտի  
 տայ , երբոր դուն ճշմարիտ և շիտակ  
 ճամբով ու ջերմեռանդութիւնով  
 խնդրելու ըլլաս — ան ատենը դուն պի-  
 տի տեսնաս թէ՛ ինչպէս կ'ըլլայ որ  
 Քրիստոս ինք անձամբ ( է ամէնը , և  
 ամէն բանի մէջ՝ , և իմաստութիւն՝  
 արդարութիւն՝ սրբութիւն՝ և փրկու-  
 թիւն է՝ ինքը , ( ա կորնթ . ա . 30 )  
 բոլոր խեղճ՝ կորսուած մեղաւոր-  
 ներուն . ու պիտի տեսնես ալ թէ՛



ինչպէս կ'ըլլայ որ Աստուած անիկայ  
 որ մեզք չէր գիտեր, մեզն համար մե-  
 զաւոր սեպեց, որ մենք անոր միջո-  
 ցովը Աստուծոյ արդարները ըլլանք:  
 (բ. Կորնթ. ե. 21:) Եւ ան ատենը՝  
 Մարիամ սիրելիս, թէ որ 'ի հարկէ մեզ  
 պիտի թողուս, ու ա՛լ հոս չպիտի կե-  
 նաս, մահուան ձորին մէջէն անվախ  
 պիտի անցնիս՝ ճշմարտութեան ցու-  
 պին վրայ կռթռնելով. և քու երջանիկ  
 հոգիդ՝ մարմինէն հեռանալով՝ (ինչ-  
 պէս որ Առաքեալը կ'ըսէ,) Տէրօջը  
 հետ պիտի ըլլայ՝" (բ. Կորնթ. ե. 8:)

«Ո՛վ եղբայր՝ Քաթիլներ բոլոր աս  
 բաները գիտնալովը՝ երջանիկ ըլլա-  
 լու շատ պատճառներ ունէր. բայց  
 երբոր մայրս հոս չէ՝ դուն ադ բանե-  
 րուն վրայ կրկին և կրկին խօսելու ես.  
 որովհետեւ ատոնք մէկիկ մէկիկ իմ  
 մահուան անկողինիս բարձին վրայի

փուշերը կը վերցընեն , և ես ալ յոյս ունիմ թէ կարող պիտի ըլլամ հաւատալ բոլոր ըսածներուդ : Ի այց քահանան ի՞նչ պիտի ըսէ . կարելի է որ հերետիկոսի տեղ դնելով պիտի անիծէ զիս ե՛ղբայր” : Աս բանը միտքը գալով՝ սոսկում եկաւ վրան :

«Ո՛հ՝ ադ բանը՝ բուն իր անձին մաս կ’ընէ . ուստի դուն բնաւ մի՛ վախնար : Անկեղծ եղի՛ր , և ամուր բունէ Տէր Յիսուսն ու իր բուն խօսքերը . և մարդոց ըրածէն վախնալու բան մը չկայ” :

«Ալ մեր խեղճ մայրը ի՞նչ պիտի ընէ , որ իր Անկեղեցին՝ սուրբ Մարիամը՝ և բոլոր սուրբերը՝ կը սիրէ\* , ու անոնց ամենուն կը հաւատայ” :

\* Աւետարանական բոլոր Քրիստոնեայ հաւատացեալներն ալ կը սիրեն Քրիստոսի ճշմարիտ եկեղեցին ու բոլոր սուրբերը , բայց ո՛չ զանոնք կը պաշտեն՝ ու Ե՛ւ ալ անոնցմէ փրկութիւն կ’սպասեն :

«Ե՛՛՛» երբեմն երբեմն Լստուածաշունչէն անոր խօսելու ենք, որ իր ականջին զարնելով՝ անոր սիրտը շահին . և ամէն բանէն աւելի Լստուծոյ աղօթելու ենք՝ որ իր Սուրբ Հոգիովը լուսաւորէ անիկայ, որ գիտնայ թէ իր սիրելի զաւակը ապահով է փառքին մէջ՝ թէ և մենք անկէ զուրկ մնանք աս աշխարհիս մէջ : Ե՛՛՛ օրհնեալ կրօնք՝ որ մեզ ամենքս մխիթարելու կարող է, թէ կենդանութեան ու թէ մեռնելու վիճակի մէջ . և իմ մի միայն փափաքս աս է թէ՛ մեր հայրենեաց մէկ ծայրէն մինչև միւսը զըուցուի անուշիկ պատմութիւնը, մինչև որ ամէն մարդ՝ թէ այր, թէ կին ու թէ տղաքը գիտնան որ Քրիստոս մեռաւ իրենց համար . և թէ՛ անոր արժանաւորութեանը համար Լստուած կ'ողորմի հաւատացեալներուն : Ո՛՛՛ ու

րեմն մեր երկիրը ո՞րչափ երջանիկ երկիր մը պիտի ըլլայ ան ատենը : Ա. Լետարանն է մեր կարօտ եղած բանը . ու ան ատենը՝ Աստուծոյ Խօսքն է որ կ'ըսէ , և ոչ թէ լ մն , Արանի անանկ վիճակի մէջ եղող ժողովուրդին . երանի ան ժողովուրդին՝ որուն Աստուածը Եհովան է :” (Սաղմ. Ճխդ. 15:)



